ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 92-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 15-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների վերապատրաստման, ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 15-Լ հրամանի հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-րդ ենթակետով.

«8.1) Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում՝ ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և այդ պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու նպատակով վերապատրաստումը կարող է իրականացվել նշանակումից հետո մեկ ամսվա ընթացքում՝ ուսումնական պլաններով նախատեսված ժամկետում»:

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

22.12.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ